Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության
իրավաբանական վարչության
իրավական խորհրդատվության
և վերլուծության բաժնի պետ
Լ. Վիրաբյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և վերլուծության բաժնի փորձագետ Մերի Մանուկյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) ուսումնասիրել և դիրքորոշումներ եմ ներկայացրել հետևյալ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ.

ա) «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ֆրանսիայի Հանրապետության ներքին գործերի և անդրծովյան տարածքների նախարարության միջեւ համագործակցության մասին» համաձայնագիր,

բ) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Տոգոյի Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական և ծառայողական անձնագրեր ունեցող անձանց մուտքի վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագիր,

գ) Շվեցարիայի զարգացման և համագործակցության գործակալության, ՏԿԵՆ և ՆԳՆ միջև Շվեցարիայի Համադաշնության կողմից տրամադրվող աջակցության շրջանակներում «Վաղ վերականգնում ջրհեղեղներից հետո 2024» ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայնագիր,

դ) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Անգոլայի Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական, ծառայողական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց մուտքի վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագիր,

ե) «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գտնվելու պայմանների մասին» համաձայնագիր,

զ) «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա,

է) «ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» 2018թ. սեպտեմբերի 28-ին ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագիծ,

ը) «Ամերիկայի Միացյալ Նահանգների ներքին գործերի քարտուղարության ԱՄՆ երկրաբանական ծառայության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միջև բնական աղետների հետ կապված գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր,

թ) «Տեղեկատվության փոխանակման համար ԱՊՀ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման հայեցակարգի» նախագծի շուրջ ԱՊՀ մասնակից պետությունների առաջարկությունների և առարկություններ,

ժ) «Բռնության և ոտնձգության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 190 կոնվենցիայի վավերացման վերաբերյալ,

ի) «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» (Macolin Convention) ԵԽ կոնվենցիայի մասին,

լ) ՀՀ ՆԳՆ ՓԾ ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կողմից առաջարկվող հուշագրի նախագծի վերաբերյալ.

2) ուսումնասիրել և ներկայացրել եմ պատասխաններ հետևյալ հարցումների վերաբերյալ.

ա) Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ և 20-րդ հոդվածների առնչությամբ հարցադրումների, այդ թվում՝ ոլորտային օրենսդրությամբ տարբեր ծառայությունների համար սահմանված վարձատրության հետ կապված առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին

բ) «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ infocom.am լրատվական կայքի լրագրող Հայարփի Բաղդասարյանից հարցում,

գ) Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Սոնա Այվազյանից տեղեկատվական հարցում,

դ) Փաստաբան Յուրա Ավայանի կողմից ստուգաչափման սարքերի վերաբերյալ հարցում.

3) պատրաստել եմ պատասխան իրավաբանական վարչություն հասցեագրված գրությունների վերաբերյալ, մասնավորապես.

ա) Ալավերդի համայնքի շահառուների (թվով՝ 6) դիմումները, արձանագրությունները, վնասված տների նկարները և շահառուների ցանկը համադրման (համեմատման) ներկայացնելու մասին, Լոռու մարզպետարան,

բ) 2024թ. ընթացքում արձանագրված ռազմավարական բնույթի սպառնալիքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրամադրելու մասին,

4) ուսումնասիրել և պարզաբանումներ եմ տրամադրել հետևյալ գրություններով.

ա) աշխարհագրական նշումների անօրինական օգտագործումը շուկայում կանխելու վերաբերյալ,

բ) ոստիկանության ծառայությունից արձակված նախկին ծառայողների չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցման գումարների հատուցման պահանջի վերաբերյալ,

գ) ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի «Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում պայմանագրային զինծառայողներին ամսական դրամական հատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 1321-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1219-Ն որոշման վերաբերյալ.

5) Իրավական խորհրդատվություններ եմ տրամադրել ՀՀ ՆԳՆ կառուցվածքային ստորաբաժանումների և ենթակա մարմինների գործունեության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարության իրավաբանական
վարչության իրավական խորհրդատվության
և վերլուծության բաժնի փորձագետ *Մ. Մանուկյան*

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ ________________

Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարության իրավաբանական
վարչության իրավական խորհրդատվության
և վերլուծության բաժնի պետ *Լ. Վիրաբյան*

03.12.2024թ.